

# ԻՊԱՍ Զեկույց. Երևանի քաղաքապետարանի դեմ դատական գործերի ուսումնասիրություն



Երևան, 2021թ.



Սույն զեկույցը պատրաստվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Դատական բարեփոխումների խթանում. Հանրային կառավարման որակի բարելավում. արդյո՞ք նոր Հայաստանը նոր իրականություն է ստեղծում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի (NED) ֆինանսավորմամբ, թիվ 2020-0183 դրամաշնորհի շրջանակներում:

Զեկույցի բովանդակությունը և արտահայտված տեսակետները, կարծիքները պատկանում են ուսումնասիրության և զեկույցի հեղինակներին և հնարավոր է, որ չհամընկնեն ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամ կազմակերպության տեսակետների հետ:

*Սույն զեկույցի հեղինակներն են՝ Արաքս Մելքոնյանը, Աննա Մելիքյանը, Նինա Հակոբյանը:*

*Դատական ակտերի ուսումնասիրության և տեղեկատվության հավաքագրմանը աջակցել են՝ Վանատուր Շերենցը, Կարինա Ավանեսյանը, Էվելինա Հակոբյանը, Քրիստինա Ղուկասյանը, Անժելիկա Առուշանյանը:*

|   |           |
|---|-----------|
| <b>ԱՄՓՈՓԱԳԻՐ.....</b>   | <b>4</b>  |
| Ընդհանուր տեղեկություններ.....  | 6         |
| Վարչարարության խնդիրներ.....  | 16        |
| Համայնքային վճարովի ավտոկայանատեղիում առանց վճարելու կայանելու փաստերով նշանակված վարչական տույժերի վիճարկման գործեր..... | 16        |
| Այլ գործեր.....   | 20        |
| Դատական պրակտիկայի խնդիրներ.....  | 26        |
| Կարճման որոշումներ.....   | 30        |
| Վարչական դատարանի լրացուցիչ որոշումներ.....   | 31        |
| <b>ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ.....</b>  | <b>32</b> |
| <b>ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....</b>   | <b>34</b> |
| ՀԱՎԵԼՎԱԾ 1.....   | 36        |

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպությունը 2020թ. մարտի 1-ից ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ իրականացնում է «Հանրային կառավարման համակարգի բարելավում. արդյո՞ք նոր Հայաստանը նոր իրականություն է ստեղծում» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում իրականացվել է Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանների դեմ բերված հայցերի առնչությամբ վարույթ ընդունված գործերի ուսումնասիրություն, որի նպատակներից մեկն է վերհանել դատարանի կողմից արձանագրված վարչարարության համակարգային խնդիրները: Մասնավորապես, վերլուծվել են 2019թ. և 2020թ. դատարան մուտքագրված և մինչև 2020թ. հունիսի 30-ը կայացված 787 վճիռներից 274-ը, ինչպես նաև 882 հայցերով կայացված կարճաման որոշումներից 228-ը:

Դիտարկված գործերի 68%-ը բավարարվել են ամբողջությամբ կամ մասնակի: Դիտարկված գործերից 76%-ի դեպքում վիճարկվել են վարչական տույժի ենթարկելու մասին որոշումները: Դիտարկված գործերի 40%-ը վերաբերել են ավտոտրանսպորտային միջոցը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելու համար նշանակված վարչական տույժի վիճարկմանը:

Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են միանման համակարգային խնդիրներ, որոնց վերաբերյալ ՀՀ վարչական դատարանը բազմիցս հստակ դիրքորոշում է հայտնել, այդ թվում՝ կիրառելի օրենսդրության և դրանով պայմանավորված վարչական վարույթ իրականացնելու պահանջների, ապացույցների որակի ու կիրառվող ժամկետների վերաբերյալ: Առավել հաճախակի արձանագրվել են պատշաճ վարչարարության, սեփականության և լսված լինելու իրավունքների խախտումներ:

Արձանագրվել է նաև, որ Երևանի քաղաքապետարանի դեմ բերված հայցերով դիտարկված գործերից 60%-ում (հիմնականում վարչական տույժերի վիճարկման գործերով) ո՛չ Հայցվորը, ո՛չ էլ Պատասխանողը չեն ապահովել ներկայությունը դատական նիստերին:

Երևանի քաղաքապետարանը և վարչական շրջանները ընդհանուր առմամբ գործերի 84%-ով (231 գործով) չեն ապահովել ներկայությունը գործի քննության ժամանակ, իսկ ավտոտրանսպորտային միջոցը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելու համար նշանակված վարչական տույժի վիճարկման վերաբերյալ դիտարկված 109 գործերից և ոչ մեկով Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչները չեն ներկայացել Դատարան:

Ուսումնասիրության համաձայն՝ ՀՀ վարչական դատարանն արձանագրել է շարունակական բնույթ կրող մի շարք խնդիրներ, մասնավորապես՝

- բազմակողմանի քննություն չիրականացնելը, այդ թվում՝ լաված լինելու իրավունքի իրացումը չապահովելը, ներառյալ՝ արձանագրության կազմմանը ենթադրյալ իրավախախտին մասնակից չդարձնելու և իրավունքներն ու պարտականությունները չբացատրելու, վարույթով նիստի մասին պատշաճ չձանուցելու պատճառով,
- ավելի ցածր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտի կիրառումը,
- ոչ վերաբերելի ապացույց ներկայացնելը և պատասխանատվության ենթարկելը՝ զանցակազմի բացակայության կամ զանցակազմը հաստատված չլինելու պարագայում,
- վարչական վարույթ իրականացնելու ժամկետները չապահպանելը,
- հայեցողական լիազորության իրացումը համաչափության և կամայականության արգելքի սկզբունքների խախտմամբ,
- պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը չապահպանելը:

Կազմակերպության կողմից իրականացված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ չնայած ՀՀ վարչական դատարանի կողմից բազմաթիվ վճիռների կայացմանը, նույնանման խնդիրների արձանագրմանը՝ Երևանի քաղաքապետարանի որդեգրած քաղաքականությունում ոչինչ չի փոխվում: Վերջինս շարունակում է անտեսել թե՛ ՀՀ վճռաբեկ, և թե՛ ՀՀ վարչական դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով արձանագրված խնդիրները, նույնաբովանդակ որոշումներ կայացնել՝ նույն ընթացակարգային խախտումներով, որոնք հանգեցնում են անձանց իրավունքների էական և կոպիտ խախտման, որի արդյունքում վնաս է կրում պետությունը, քանզի նման հայցեր հարուցելու և բավարարելու արդյունքում պետությունը ծախսում է մարդկային և ֆինանսական ռեսուրսներ:

Արձանագրվել է նաև, որ Երևանի քաղաքապետարանը իր դեմ հայցադիմումի դեպքում սեփական նախաձեռնությամբ վարչական ակտն անվավեր է ճանաչում՝ դատարանից հայցը մերժելու ակնկալիքով: Նշված դեպքում, եթե Դատարանը որոշումը ստանում է հայցը վարույթ ընդունելուց հետո՝ անկախ ընդունման ամսաթվից, ապա առաջանում են դատական ծախսեր:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված տույժերի նշանակման մասին որոշումների վիճարկման գործերով Հայցվորն ազատված է պետական տուրք վճարելու պարտավորությունից: Համապատասխան դիտարկված գործերով բերված հայցերի մեծամասնությունը բավարարվել են ՀՀ վարչական դատարանի կողմից՝ նույնանման հիմքերով: Արդյունքում կատարվել է գործի քննության համար անհրաժեշտ ծախս, ինչպես նաև բավարարվել է ներկայացուցչական ծախսերը հատուցելու պահանջը, որը մի քանի անգամ գերազանցում է նշանակված տուգանքի չափը:

Ծրագրի շրջանակներում Երևանի քաղաքապետարանին առաջարկվել է հանդիպել և քննարկել բացահայտված խնդիրները, սակայն այդ առաջարկը մերժվել է, իսկ դիրքորոշումը հայտվել է նամակի տեսքով, որը կցված է սույն զեկույցին (Տե՛ս հավելված 1):

## Ընդհանուր տեղեկություններ

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարարական կազմակերպությունը 2020թ. մարտի 1-ից ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ իրականացնում է «Հանրային կառավարման համակարգի բարելավում. արդյո՞ք նոր Հայաստանը նոր իրականություն է ստեղծում» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում իրականացվել է ՀՀ վարչական դատարանում 12 պետական և համայնքային մարմինների, այդ թվում՝ Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանների դեմ բերված հայցերի առնչությամբ վարույթ ընդունված գործերի ուսումնասիրություն, որի նպատակներից է վերհանել դատարանի կողմից արձանագրված վարչարարության համակարգային խնդիրները: Մասնավորապես, վերլուծվել են 2019թ. և 2020թ. դատարան մուտքագրված և մինչև 2020թ. հունիսի 30-ը կայացված 787 վճիռներից 274-ը, ինչպես նաև 882 հայցերով կայացված կարճման որոշումներից 228-ը:

Դիտարկված գործերից 208-ով (76%) վիճարկվել են վարչական տույժի ենթարկելու մասին որոշումները:

Վերը նշված 274 գործերից 178-ով (65%) հայցը բավարարվել է ամբողջությամբ, իսկ 9-ով՝ մասնակի: Ընդ որում, ուսումնասիրված 274 հայցերից 49-ը ներկայացվել է Երևանի վարչական շրջանների դեմ, որոնցից 39-ը (80%) բավարարվել է:

Դիտարկված գործերը հիմնականում վերաբերել են՝

- ավտոտրանսպորտային միջոցը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելու համար նշանակված վարչական տույժի վիճարկմանը (ՎԻՎ ՀՀ օրենսգիրք, 124.7-րդ հոդված) (109 գործ),
- կառուցապատման թույլտվության ժամկետների չպահպանման և շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու կապակցությամբ կիրառված տուգանքների վերաբերյալ վարչական ակտերի վիճարկմանը (ՎԻՎ ՀՀ օրենսգիրք, 154-րդ և 154.1-րդ հոդված) (33 գործ),
- գույքահարկի գանձմանը (26 գործ),
- առանց թույլտվության արտաքին գովազդ տեղադրելու համար նշանակված վարչական տույժի վիճարկմանը (25 գործ),
- առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում առանց համապատասխան թույլտվության գործունեություն իրականացնելու համար նշանակված վարչական տույժի վիճարկմանը (ՎԻՎ ՀՀ օրենսգիրք, 169. 16-րդ հոդված) (16 գործ),
- ոչ սահմանված տեղերում առևտուր անելու համար նշանակված վարչական տույժի վիճարկմանը (ՎԻՎ ՀՀ օրենսգիրք, 162-րդ հոդված) (10 գործ),

- առևտրի, հանրային սննդի օբյեկտների վաճառողի, կենցաղային ծառայության օբյեկտի կատարողի և առևտրի իրականացման վայրի կազմակերպչի՝ պաշտոնատար անձանց կողմից օրենքով սահմանված պահանջները խախտելու համար նշանակված վարչական տույժի վիճարկմանը (ՎԻՎ ՀՀ օրենսգիրք, 158-րդ հոդված) (9 գործ),
- աղբահանության վճարի գանձմանը (7 գործ),
- պետական և (կամ) համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնակամ զավթելուն և դրա հետևանքները չվերացնելուն (ՎԻՎ ՀՀ օրենսգիրք, 48-րդ հոդված) (5 գործ) և այլն:

Կազմակերպությունը վարչական գործերով դատավարությունների մշտադիտարկումը և դատական ակտերի ուսումնասիրությունը ՀՀ վարչական դատարանում սկսել է դեռևս 2019 թ. հունվարից: Մշտադիտարկման արդյունքները և 2018-2020 թթ. ընթացքում կայացված դատական ակտերի վերլուծությունը ցույց են տալիս, որ Երևանի քաղաքապետարանը գործելատճը չի փոխվում, խախտումները նույն են: Դա հանգեցնում է ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների խախտման՝ հիմք ստեղծելով նորանոր հայցերի համար, ինչի արդյունքում ոչ արդյունավետ են ծախսվում նաև համայնքի ֆինանսական և մարդկային ռեսուրսները:

Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են միանման համակարգային խնդիրներ, որոնց վերաբերյալ ՀՀ վարչական դատարանը բազմիցս հստակ դիրքորոշում է հայտնել, այդ թվում՝ կիրառելի օրենսդրության և դրանով պայմանավորված վարչական վարույթ իրականացնելու պահանջների, ապացույցների որակի ու կիրառվող ժամկետների վերաբերյալ: Առավել հաճախակի արձանագրվել են պատշաճ վարչարարության (274 գործով), սեփականության (250 գործով) և լսված լինելու իրավունքների (143 գործով) խախտումներ:

Դիտարկված գործերից 202-ով (74%) հայցվորը եղել է ֆիզիկական անձ, 59-ով (21.5%)՝ առևտրային կազմակերպություն, իսկ 13 գործով (5%)՝ անհատ ձեռնարկատեր:

Ֆիզիկական անձ հանդիսացող հայցվոր ունեցող դիտարկված 202 գործից 53-ի դեպքում (26%) հայցվորը ներկայացուցիչ չի ունեցել, 72 գործից 35-ով (49%) իրավաբանական անձ հանդիսացող հայցվորը ներկայացված է եղել տնօրենի կամ աշխատակցի կողմից: Մյուս դեպքերում հայցվորը ներկայացված է եղել փաստաբանի կողմից կամ այլ տեսակի ներկայացուցիչ է ունեցել: Հատկանշական է, որ վճիռների զգալի մասի դեպքում (35 գործ) պարզ չէ, թե արդյոք ներկայացուցիչը փաստաբան է, թե՛ ոչ. ներկայացուցչի անունն առկա է փաստաբանների պալատի կայքում, սակայն վճռում փաստաբան լինելու մասին նշում առկա չէ:

Հայցվորն անձամբ կամ ներկայացուցչի միջոցով քննությանը մասնակցել է դիտարկված գործերից միայն 98-ի դեպքում (36%): Հայցվոր կողմը մասնակցություն չի ապահովել հիմնականում վարչական տույժերի վիճարկման գործերով: Հայցվորի կամ նրա

ներկայացուցչի բացակայությամբ քննված գործերից 124-ի դեպքում (70%) հայցը բավարարվել է ամբողջությամբ, իսկ 3-ի դեպքում՝ մասնակի: Համայնքային ավտոկայանատեղիում առանց վճարի վճարման կայանելու փաստով նշանակված վարչական տույժի վիճարկման վերաբերյալ դիտարկված 109 գործերից միայն 3-ով է հայցվորն անձամբ կամ ներկայացուցչի միջոցով մասնակցել գործի քննությանը: Ընդ որում, փաստաբանն անձամբ մասնակցել է այդ գործերից միայն մեկին:

Հատկանշական է, որ Երևանի քաղաքապետարանը և վարչական շրջանները գործերի ճնշող մեծամասնության դեպքում՝ 231 գործով (84%) չեն ապահովել ներկայությունը գործի քննության ժամանակ:

Դիտարկված գործերից 165-ում (60%) ո՛չ Հայցվորը, ո՛չ էլ Պատասխանողը չեն ապահովել ներկայությունը դատական նիստերին:

Ավելին, Պատասխանողի կողմից դիտարկված գործերից միայն 170-ի դեպքում է (62%) ներկայացվել հայցադիմումի պատասխան կամ այլ տեսակի գրավոր առարկություն: 15 գործով Երևանի քաղաքապետարանն ընդամենը սահմանափակվել է գրություն ուղարկելով, որում թվարկել է ՀՀ վարչական և Վարչական վերաքննիչ դատարանների մի շարք գործեր և խնդրել հաշվի առնել դրանցում արտահայտված դիրքորոշումը որպես իրավական փաստարկ: Նշված մոտեցումն արդյունավետ չէր, քանի որ Դատարանը նշել էր, որ կաշկանդված չէ նշված դատական ակտերով:

Երևանի քաղաքապետարանի պասիվ դերն առավել ակնհայտ երևում է ավտոտրանսպորտային միջոցը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելու համար նշանակված վարչական տույժի վիճարկման վերաբերյալ գործերով: Այս խնդրի առնչությամբ դիտարկված բոլոր 109 գործերով Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչները չեն ներկայացել Դատարան, գործերը քննվել են նրանց բացակայությամբ: Ավելին, դիտարկված 109 գործերից 75-ի դեպքում (69%) Երևանի քաղաքապետարանն անգամ առարկություն կամ դիրքորոշում չի հայտնել՝ սահմանափակվելով վարչական վարույթի նյութերը Դատարան ներկայացնելով, իսկ 3-ի դեպքում<sup>1</sup> չեն ներկայացվել անգամ վարչական վարույթի նյութերը: Գործերից մեկով Դատարանն արձանագրել է, որ հայցը բավարարելու համար հիմք է ընդունվել նաև այն հանգամանքը, որ Պատասխանողը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում հայցադիմումի պատասխան չի ներկայացրել և հայցի դեմ չի առարկել, ինչի հետևանքով Դատարանը նույն հոդվածի 8-րդ մասի ուժով

---

<sup>1</sup> Տե՛ս, ՎԴ/3658/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809933711](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809933711);  
ՎԴ/11039/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809941666](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809941666); ՎԴ/3830/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809933912](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809933912)




հայցադիմումի պատասխան չներկայացնելը գնահատել է որպես Պատասխանողի կողմից հայցվորի վկայակոչած փաստերի ընդունում<sup>2</sup>:

Դատավորների փոփոխություն տեղի է ունեցել միայն 7 գործով՝ հայցը վերադարձնելուց հետո այլ դատավորի կողմից վարույթ ընդունելու արդյունքում: Ընդ որում, մի գործով, երբ հայցադիմումը վերադարձվել է երկու անգամ, ամեն անգամ հայցը մակագրվել է տարբեր դատավորների<sup>3</sup>:

Դիտարկված գործերից 39-ի դեպքում հայցը վերադարձվել է, որոշ դեպքում՝ մի քանի հիմքով, ընդ որում՝ 2 գործով այն վերադարձվել է 2 անգամ: Հայցադիմումները վերադարձվել են հետևյալ հիմնավորումներով.

- կցված չեն եղել պահանջվող փաստաթղթերը, հիմնականում՝ պետական տուրքը վճարելու մասին անդորրագիրը կամ վիճարկվող վարչական ակտը,
- Դատարանի կողմից կատարվել է հայցի հիմքի, առարկայի, տեսակի փոփոխման կամ լրացման վերաբերյալ մատնանշում,
- հայցադիմումը ստորագրված չի եղել,
- բաց էր թողնվել Դատարան դիմելու ժամկետը, և հայցադիմումին կից չէր ներկայացվել միջնորդություն բացթողնված ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ:

Գործերից 27-ով հայցվորը ներկայացրել է դատարան դիմելու բացթողնված ժամկետը հարգելի համարելու միջնորդություն: Դրանցից 12-ը բավարարվել է, 12-ը՝ թողնվել առանց քննության, 2-ը՝ թողնվել է դատական նիստում քննության, իսկ մեկը՝ մերժվել: Որպես բացթողնված ժամկետը հարգելի համարելու հիմք հայցվորները նշել են վարչական ակտի մասին չձանուցվելը կամ ուշացումով ծանուցվելը, վերադասության կարգով բողոքարկելը, ՀՀ-ում հաստատված արտակարգ դրության և տեղաշարժի սահմանափակումով պայմանավորված իրավիճակը և այլն:



<sup>2</sup> ՎԴ/11208/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809941889](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809941889)

<sup>3</sup> ՎԴ/7860/05/19, [http://datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809938221](http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809938221)

Դիտարկված գործերից 181-ում (66%) Հայցվորն ազատված է եղել պետական տուրք վճարելուց օրենքի ուժով:

Դիտարկված գործերից 4-ով ներկայացվել է պետական տուրքը վճարելուց ազատելու կամ վճարումը հետաձգելու միջնորդություն: Ներկայացված միջնորդություններից 3-ը բավարարվել են, իսկ մեկը Դատարանը թողել է առանց քննության: Որպես միջնորդությունը բավարարելու հիմնավորում Դատարանը, օրինակ, հաշվի է առել այն հանգամանքը, որ Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության վարչական ակտերով բռնագանձումների բաժնի կողմից կայացրած որոշմամբ հայցվորին պատկանող անշարժ, շարժական գույքերի և դրամական միջոցների նկատմամբ կիրառվել են արգելանքներ, որոնք պահպանվում են մինչ օրս և նա հարկադրաբար զրկված է իր դրամական միջոցները սնօրինելու հնարավորությունից, իսկ հայցվորը տվյալ պահին չի աշխատում և չունի դրամական խնայողություն, հետևաբար պետական տուրք վճարելու հնարավորություն հայցվորն որոշումը կայացնելու օրվա դրությամբ ակնհայտորեն չունի<sup>4</sup>: Մեկ այլ գործով<sup>5</sup> Դատարանը բավարարել է պետական տուրքը վճարելուց ազատելու մասին միջնորդությունը՝ հաշվի առնելով հայցվորի գույքային դրությունը (թոշակառու լինելը): Այս դեպքում Դատարանը գտել է, որ այդ կերպ Հայցվորին իրավական հնարավորություն կտրվի իրականացնելու օրինական շահերի դատական պաշտպանության հիմնարար իրավունքը: Առանց քննության է թողել այն միջնորդությունը, որում Հայցվորը խնդրել է հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը քննարկելիս պետական տուրքի վճարված լինելու մասով հիմք ընդունել հայցադիմումին կից ներկայացված անդորրագրի պատճենը: Անդրադառնալով վերոնշյալ միջնորդությանը՝ Դատարանը գտել է, որ այն առարկայագուրկ է և քննարկման ենթակա չէ, քանզի հայցվորը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի թ/ կետի ուժով ազատված էր պետական տուրք վճարելու պարտականությունից<sup>6</sup>:

Դիտարկված գործերից 6-ով ներկայացվել էր հայցի ապահովման միջնորդություն, որից 6-ն էլ մերժվել են Դատարանի կողմից, քանի որ հայցի ապահովման միջոց չձեռնարկելը որևէ կերպ չի կարող անհնարին դարձնել կամ դժվարացնել գործով հետագայում կայացվելիք դատական ակտի կատարումը: Նշված միջնորդությունները ներկայացվել են համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի զավթման, ինքնակամ շինության օրինականացման, կասեցված շինարարությունը վերսկսելու համար փաստացի թույլտվության տրամադրման՝ թույլտվության մեջ փոփոխություններ կատարելով, գույքահարկի հաշվարկման և բռնագանձման, հողամասի ուղղակի վաճառքի, տեղական տուրքերի գանձման հետ կապված գործերով:


<sup>4</sup> ՎԴ/6795/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809937095](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809937095)

<sup>5</sup> ՎԴ/0403/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809930221](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930221)

<sup>6</sup> ՎԴ/7531/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809937896](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809937896)

Դիտարկված գործերից 2–ով ներկայացվել է քննարկվող ակտի գործողությունը կասեցնելու վերաբերյալ միջնորդություն<sup>7</sup>: Միջնորդություններից մեկը բավարարվել է, սակայն «դատալեքս» համակարգում բացակայում են մանրամասներ հիմքերի վերաբերյալ, բացառությամբ, որ Պատասխանողի կողմից ներկայացվել է վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին վարչական դատարանի որոշման դեմ վերաքննիչ բողոք, որը բավարարվել է: Մյուս միջնորդությունը մերժվել է, սակայն կրկին որոշումն առանձին հրապարակված չէ, առկա չեն մանրամասներ:

Թեև դիտարկված վճիռները բավարարվել են հիմնականում միանման հիմքերով, սակայն գործերի քննության շրջանակներում դատարանը ստիպված է եղել հիմնականում նշանակել 2 նիստ, ներառյալ՝ վճռի հրապարակումը: Մասնավորապես, 2 նիստ՝ 162 գործով, 3 նիստ՝ 60 գործով, 4 նիստ՝ 26 գործով, 8 գործով տեղի է ունեցել 5 նիստ, իսկ 10 գործով՝ 5-ից ավելի նիստեր: 8 գործով տեղի է ունեցել 1 նիստ (արագացված դատաքննություն է տեղի ունեցել, վճռի հրապարակման նիստ է տեղի ունեցել): 8 նիստ նշանակվել է չսահմանված վայրում առևտուր իրականացնելու<sup>8</sup>, ինչպես նաև ինքնակամ շինության օրինականացման վերաբերյալ գործերով<sup>9</sup>, իսկ 9 նիստ նշանակվել է հողամասի ուղղակի վաճառքի ձևով օտարելու գործով<sup>10</sup>:



Նախնական նիստեր նշանակվել են գործերից միայն 61-ով: Գործերից մեկով նշանակվել է 5 նախնական նիստ<sup>11</sup>:

<sup>7</sup> ՎԴ/8380/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809938752](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809938752); ՎԴ/4945/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809935186](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809935186)

<sup>8</sup> ՎԴ/5967/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809936190](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809936190)


<sup>9</sup> ՎԴ/2775/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809932795](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932795)

<sup>10</sup> ՎԴ/5967/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809936190](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809936190)

<sup>11</sup> ՎԴ/2775/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809932795](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932795)

Դիտարկված ժամանակահատվածում 28 չկայացած նիստերի հիմնական պատճառն արտակարգ դրությամբ պայմանավորված սահմանափակումներն էին՝ 9 նիստ, 4 նիստի դեպքում դատավորը վատառողջ էր, 3-ի դեպքում դատավորը մասնակցել է տարատեսակ միջոցառումների, 3-ի դեպքում՝ հրավիրված է եղել Բարձրագույն դատական խորհուրդ հարցազրույցի, 3-ի դեպքում՝ նիստի օրը մասնակցել է դասընթացների, 2-ի դեպքում Դատարանն արգելափակված է եղել, մեկ դեպքում նախորդ նիստն ուշ է ավարտել և մեկ դեպքում նիստի օրը տեղափոխվել է: Պատճառը նշված չէ 3 նիստի դեպքում:

Դիտարկված գործերից 12-ի քննության ընթացքում կայացվել է արագացված դատաքննություն անցկացնելու մասին որոշում, որից առնվազն 8-ի դեպքում (1 գործով չի նշվել պատճառը)՝ հայցն ակնհայտ հիմնավոր, իսկ 3-ը՝ հայցն ակնհայտ անհիմն լինելու հիմքով:




12 գործից 10-ը քննվել են դատավոր Կարեն Զարիկյանի, իսկ 2-ը՝ դատավոր Միեր Պետրոսյանի կողմից: Ակնհայտ հիմնավոր հայցերը վերաբերել են առանց թույլտվության արտաքին գովազդ տեղադրելու (4 գործ), վճարովի ավտոկայանատեղիում կայանվելու դիմաց չվճարելու հարցին (3 գործ), իսկ մնացած հայցերն վերաբերել են համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի զավթման, պետական սեփականություն հանդիսացող հողերը հրապարակային սակարկելու և աճուրդի դնելու, ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրման (շինարարության թույլտվության բաղկացուցիչ), առանց թույլտվության բացօթյա առևտուր իրականացնելու և վարձակալության հիմունքներով տրված հողամասի օտարման հարցերին:

Դիտարկված 274 գործերից միայն մեկով է կայացվել գրավոր քննություն անցկացնելու որոշում<sup>12</sup>: Վճռում մանրամասներ առկա չեն, սակայն այդ որոշումը կայացնելու նախորդող նիստը չէր կայացել արտակարգ դրությամբ պայմանավորված սահմանափակումների

<sup>12</sup> ՎԴ/8633/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809939058](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809939058)

պատճառով, ուստի, ենթադրաբար, տեղաշարժի սահմանափակումները հիմք են ծառայել գրավոր քննություն անցկացնելու համար:

Դիտարկված գործերի տևողությունը վարույթ ընդունելու պահից մինչև վճռի հրապարակումը տատանվել է 21 օրից (առանց թույլտվության արտաքին գովազդ տեղադրելու վերաբերյալ գործ)<sup>13</sup> մինչև 15 ամիս (վարձակալության հիմունքներով տրված հողամասի օտարման վերաբերյալ գործ)<sup>14</sup>: Գործերից 97-ով (35%) այն կազմել է մինչև 3 ամիս, 119-ով (44%)՝ 4-ից 6 ամիս, 53-ով (19%)՝ 6 ամսից մինչև 1 տարի, իսկ 5 գործով (2%)՝ մեկ տարուց ավելի:



Չնայած ավտոտրանսպորտային միջոցը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելու համար նշանակված վարչական տույժի վիճարկման վերաբերյալ դիտարկված 109 գործերից 98-ով (90%) հայցերը բավարարվել են, որպես կանոն մեկ հիմքով՝ արձանագրությունը ենթադրյալ իրավախախտի բացակայությամբ կազմված լինելու պատճառով, սակայն ՀՀ վարչական դատարանը գործով քննությունը, ներառյալ վճռի հրապարակումը, հիմնականում ստիպված է եղել անցկացնել 2-ից 4 նիստով: Մասնավորապես՝ 89 գործով տեղի է ունեցել 2 նիստ, 15-ով՝ 3 նիստ, 3-ով եղել է միայն 1 նիստ (արագացված դատաքննություն անցկացնելու մասին որոշում է կայացվել), իսկ 2 դեպքում՝ 4 նիստ: Գործի քննությունը վարույթ ընդունելուց մինչև վճռի հրապարակելը անցել է 2-11 ամիս:


Դիտարկված գործերից 150-ով (55%) Դատարանը գործը վարույթ ընդունելիս առանձին որոշմամբ պահանջել է վարչական վարույթի նյութերը: Դիտարկված գործերից 3-ով Երևանի քաղաքապետարանը Դատարան չի ներկայացրել վարչական վարույթի նյութերը կամ դրանց

<sup>13</sup> Տե՛ս վՊ/1059/05/20, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809943286](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809943286)

<sup>14</sup> Տե՛ս վՊ/2263/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809932260](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932260)


մի մասը<sup>15</sup>: Նման դեպքում Դատարանը գտել է, որ Պատասխանողը չի ապացուցել վկայակոչվող փաստերը, և վճռել է հոգուտ Հայցվորի:

Դիտարկված գործերից 112-ով վճիռը բողոքարկվել է, որից 59-ը՝ Հայցվորի կամ վերջինիս ներկայացուցչի, 49-ը՝ Պատասխանողի, 2-ը՝ և՛ Հայցվորի, և՛ Պատասխանողի, իսկ 2-ը՝ երրորդ անձի կողմից:



Հասկանալի է, որ վարչական սույժ նշանակելու վերաբերյալ գործերով Պատասխանողի կողմից բողոքարկված 51 ակտերից ոչ մեկը չի վերաբերել ՎԻՎ օրենսգրքի ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով նշանակված սույժի:

Վճիռներից որոշներում առկա են հղումներ ՀՀ Սահմանադրությանը (62 գործով), միջազգային պայմանագրերին /Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիային/ (13 գործով), Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպերին (20 գործով), ինչպես նաև Սահմանադրական դատարանի (15 գործով) և Վճռաբեկ դատարանի (186 գործով) որոշումներին:



<sup>15</sup> ՎԴ/3830/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809933912](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809933912), ՎԴ/11039/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809941666](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809941666), ՎԴ/3658/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809933711](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809933711)

Դիտարկված գործերից 72-ով որպես դատական ծախս ներկայացվել և հաստատվել է ներկայացուցչի փոխհատուցման ծախս, այդ թվում՝ երրորդ անձի կողմից, 8-ով՝ փոստային ծախս, մեկական գործով՝ փորձաքննության և տպագրության ծախս:

Ընդհանուր առմամբ միայն նշանակված տույժերի վիճարկման գործերով (դիտարկվել է 208 գործ, հայցը բավարարվել է 153 գործով), որոնցից 136 դեպքում Հայցվորն օրենքի ուժով ազատված է եղել պետական տուրք վճարելուց, ներկայացուցչի ծախս հատուցելու պահանջը հաստատվել է 72 գործով: Երևանի քաղաքապետարանն ընդհանուր առմամբ ստիպված է եղել վճարել Հայցվորներին 968 000 ՀՀ դրամ՝ որպես ներկայացուցչական ծախսի հատուցում:

Ավտոտրանսպորտային միջոցը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելու համար նշանակված վարչական տույժի վիճարկման վերաբերյալ 98 բավարարված գործերից 71-ում Հայցվորը պահանջել է ներկայացուցչի ծախսի հատուցում, որը Դատարանի կողմից բավարարվել է 67 գործով: Դատարանն արդարացի հատուցում է համարել 5 000-ից մինչև 15 000 ՀՀ դրամը: Դիտարկվող տեսակի գործով մեկ գործի քննության արդյունքում լուծվում է 5 000 ՀՀ դրամի խնդիր, քանի որ նախատեսված տուգանքի չափը 5000 ՀՀ դրամ է: Այսինքն՝ Երևանի քաղաքապետարանից բռնագանձվող գումարը եղել է կամ նշանակված տուգանքի համարժեքը՝ 5 000 ՀՀ դրամ, կամ դրա ընդհուպ մինչև եռապատիկը: Ընդհանուր առմամբ՝ 67 գործով որպես ներկայացուցչի ծախսի հատուցում Երևանի քաղաքապետարանը ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով նշանակված տույժերի վիճարկման գործերով ստիպված է եղել վճարել Հայցվորներին 628 000 ՀՀ դրամ:

Ըստ ՀՀ դատական դեպարտամենտի՝ միայն վարչական գործի վրա ՀՀ վարչական դատարանի կողմից կատարվելիք փոստային ծառայությունների և գրասենյակային նյութերի ծախսը միջինում կազմում է 2 208 ՀՀ դրամ մեկ գործի համար<sup>16</sup>: Այսինքն՝ պետական բյուջեից 109 գործի վրա դատարանը ծախսել է միջինում 240 672 ՀՀ դրամ, Երևանի քաղաքապետարանը՝ 628 000 ՀՀ դրամ՝ հայցվորի ներկայացուցչի ծախսը հատուցելու համար, իսկ մերժված 11 հայցերով հնարավոր է ստացել է առավելագույնը 55 000 ՀՀ դրամ: Այնինչ նշված ծախսից հնարավոր էր խուսափել՝ Երևանի քաղաքապետարանի վարչարարությունը համապատասխանեցնելով ՎԻՎ ՀՀ օրենսգրքի պահանջներին, ՀՀ վճարեկ և Վարչական դատարանի դիրքորոշումներին և կայացած դատական պրակտիկային:

Երևանի քաղաքապետարանի ոչ պատշաճ վարչարարության արդյունքում ոչ միայն ծանրաբեռնվում է Դատարանը, այլև համայնքին պատճառվում է նյութական վնաս, քանի որ դատական ծախսերը վճարվում են համայնքային բյուջեից:

---

<sup>16</sup> Տե՛ս Բարձրագույն դատական խորհրդի 7 դատարանների ՀՀ 2020-2022թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ՀՀ 2020 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտի հիմնավորում, էջ 36.

## Վարչարարության խնդիրներ

### Համայնքային վճարովի ավտոկայանատեղիում առանց վճարելու կայանելու փաստերով նշանակված վարչական տույժերի վիճարկման գործեր

Դիտարկված 274 գործերից 109-ը (40%) վերաբերել են համայնքային վճարովի ավտոկայանատեղիում առանց վճարելու կայանելու փաստերով նշանակված վարչական տույժերի վիճարկմանը, որոնցից 98-ը (90%) բավարարվել է Դատարանի կողմից: Երևանի քաղաքապետարանի դեմ բերված հայցերից սա ամենաբացասական ցուցանիշն է: Դատարանը շարունակաբար արձանագրում է նույնանման խնդիրներ, այդ թվում՝

- բազմակողմանի քննություն չիրականացնելը, այդ թվում՝ լաված լինելու իրավունքի իրացումը չապահովելը, ներառյալ՝ արձանագրության կազմմանը ենթադրյալ իրավախախտին մասնակից չդարձնելու և իրավունքներն ու պարտականությունները չբացատրելու, վարույթով նիստի մասին պատշաճ չձանուցելու պատճառով,
- ավելի ցածր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտի կիրառումը,
- ոչ վերաբերելի ապացույց ներկայացնելը և զանցակազմի հաստատված չլինելը,
- վարչական վարույթ իրականացնելու ժամկետները չապահպանելը,
- ընդհանրապես՝ ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածի կիրառելիությունը վերագրվող արարքի դեպքում,
- տեղանքի՝ որպես կայանատեղի կահավորված լինելը:

Ստորև առանձնացվում են առավել հաճախակի արձանագրված վարչարարության խնդիրները:

#### ➤ *Արձանագրությունը ենթադրյալ իրավախախտի բացակայությամբ կազմելը*

Բավարարված 98 գործից 60 գործով (61%) Դատարանը միայն արձանագրությունը ենթադրյալ իրավախախտի բացակայությամբ կազմելը համարել է բավարար վարչական ակտն անվավեր ճանաչելու համար և անգամ չի անդրադարձել այլ փաստարկներին՝ համարելով, որ տվյալ պարագայում արդեն էական չէ, թե տրանսպորտային միջոցը քանի թույլ անընդմեջ էր կայանված Երևան քաղաքի վճարովի ավտոկայանատեղում: Դրանցից 3-ի դեպքում նշված պատճառով կայացվել է արագացված դատաքննություն անցկացնելու որոշում՝ հայցն ակնհայտ հիմնավոր լինելու հիմքով<sup>17</sup>: Դատարանի համար ինքնին առանց դատավարական լրացուցիչ գործողությունների պարզ էր, որ խախտվել են ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 255-րդ (*Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության բովանդակությունը*) ու

<sup>17</sup> Տե՛ս, ՎԴ/10058/05/19 [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809940581](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809940581), ՎԴ/4879/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809935084](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809935084), ՎԴ/10038/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809940614](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809940614)



267-րդ (Վարչական պատասխանատվության ենթարկվող անձի իրավունքներն ու պարտականությունները) հողվածները և վիճարկվող որոշումն անվավեր է:

Որպես կանոն, Դատարանը հաշվի է առել, որ արձանագրությունում բացակայում է այն անձի ստորագրությունը, ում նկատմամբ այն կազմվել է, ինչպես նաև բացակայում է որևէ գրառում արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու վերաբերյալ, և հաստատված է համարել, որ գործով Հայցվորը մասնակից չի դարձվել արձանագրության կազմման գործընթացին, նրան չեն բացատրվել ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները:

Բավարարված հայցերի դեպքում Դատարանը չի համաձայնել Երևանի քաղաքապետարանի այն փաստարկի հետ, որ արձանագրության մեկ օրինակը լսումների մասին ծանուցագրի հետ փոստային առաքման եղանակով Հայցվորին ուղարկելով՝ ապահովվել է անձի լսված լինելու իրավունքը, անգամ եթե ծանուցագրում նշվել է նիստի անցկացման տեղը և ժամի, ինչպես նաև ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների վերաբերյալ տեղեկատվությունը /հակառակ պրակտիկա տե՛ս Դատական պրակտիկայի խնդիրներ բաժնում/:

Որոշ դատավորներ նաև արձանագրել են, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ՎԻՎ գործերի քննության բաժնի պետը որոշումը կայացրել է՝ չգնահատելով գործով ձեռք բերված ապացույց հանդիսացող արձանագրությունը ենթադրյալ իրավախախտի բացակայությամբ կազմված լինելու հանգամանքը, և դրանով խախտել է ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 275-րդ (Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելը) հոդվածով սահմանված պահանջը՝ ստուգել, թե արդյոք ճիշտ են կազմվել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի արձանագրությունը և մյուս նյութերը:

➤ *Ավելի ցածր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտի կիրառումը*

Արձանագրության կազմման հետ կապված խնդիրը պայմանավորված է այն հանգամանքով, որ Երևանի քաղաքապետարանն առաջնորդվում է ոչ թե ՎԻՎ ՀՀ օրենսգրքի պահանջներով, այլ Երևանի ավագանու՝ Երևանի քաղաքային համայնքում ավտոկայանատեղի տուրքի վճարման և դրա ու ավտոկայանատեղի նկատմամբ հսկողության իրականացման ձևերը սահմանելու մասին թիվ 563-Ն որոշմամբ սահմանված իրավակարգավորմամբ՝ անտեսելով ՀՀ վճռաբեկ դատարանի ՎԴ/0150/05/16 վարչական գործով 22.03.2019թ. որոշմամբ արտահայտված դիրքորոշումը և ՀՀ վարչական դատարանի բազմաթիվ վճիռները:

Այս առումով Դատարանն ընդգծել է, որ առանձին տեսակի վարույթների, այդ թվում նաև՝ վարչական պատասխանատվության վարույթի առանձնահատկությունները սահմանվում են բացառապես օրենքներով. ավելի ցածր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտերով վարչական վարույթի առանձնահատկություններ սահմանվել չեն կարող: Վարչական պատասխանատվության վերաբերյալ գործերի վարույթի առանձնահատկությունները

սահմանված են ՎԻՎ ՀՀ օրենսգրքով, որի նորմերը հավասարապես կիրառելի են բոլոր իրավախախտումների վերաբերյալ վարչական վարույթների նկատմամբ: Դատարանն ընդունել է, որ տվյալ դեպքում, թերևս, խնդրո առարկա իրավախախտման բնույթը պահանջում է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի որոշակի առանձնահատկություններ, այդ թվում կապված նաև վարչական արձանագրության կազմման հետ: Այնուամենայնիվ, քանի դեռ այդ առանձնահատկությունները սահմանված չեն օրենքով, խնդրո առարկա վարույթը պետք է կանոնակարգվի ՎԻՎ ՀՀ օրենսգրքի նորմերով: Հետևաբար, Երևան քաղաքի ավագանու թիվ 563-Ն որոշմամբ սահմանված նորմերը կիրառելի չեն:

Որոշ վճիռներով անգամ ավելի կտրուկ նշվել է, որ վարչական մարմնի կողմից խնդրո առարկա իրավախախտման առնչությամբ արձանագրությունը կազմելիս Երևան քաղաքի ավագանու թիվ 563-Ն որոշմամբ սահմանված իրավակարգավորմամբ ղեկավարվելը ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածի պահանջների փոխարեն անթույլատրելի է<sup>18</sup>:

➤ *Ապացույցների որակը*

Մի շարք գործերով Դատարանը իրավախախտման զանցակազմը քննարկելիս կարևորել է այն հանգամանքը, թե արդյո՞ք գործում առկա են այնպիսի ապացույցներ, որոնց հիման վրա հաստատվում է համայնքային վճարովի ավտոկայանատեղիում 15 րոպե անընդմեջ կայանված լինելը:

Բոլոր դիտարկված գործերով, որոնցում գնահատվել են գործում առկա լուսանկարները, Դատարանը եզրահանգել է, որ լուսանկարների ապացուցողական հատկանիշներով պայմանավորված՝ դրանք չեն կարող տրանսպորտային միջոցը 15 րոպե անընդմեջ կայանված լինելու փաստը հիմնավորող ապացույցներ հանդիսանալ: Ուստի նման գործերի շրջանակներում կարևոր դեր է ունեցել գործում տեսանյութի առկայությունը և դրա որակը<sup>19</sup>:

Տեսանյութը ոչ բոլոր գործերով է ներկայացվել Դատարան: Նման դեպքում Դատարանը փաստել է, որ գործում առկա ապացույցները բավարար չեն համայնքային վճարովի ավտոկայանատեղում Հայցվորին պատկանող ավտոմեքենան անընդմեջ կայանված լինելու փաստն ապացուցված համարելու համար:

Որոշ գործերով ներկայացված տեսանյութով իրավախախտման փաստը չի հաստատվել: Օրինակ, եղել են դեպքեր, երբ տեսանյութում չեն երևացել Հայցվորին պատկանող

<sup>18</sup> Տե՛ս, օրինակ, ՎԴ/2767/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809932738](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932738)

<sup>19</sup> Հետազոտությունն իրականացվել է մինչ ՀՀ ազգային ժողովի կողմից ՀՀ օրենքը «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ընդունելը: Օրենքի փոփոխությունը մասամբ է լուծում արձանագրված խնդիրը, քանի որ Երևանի քաղաքապետարանի կողմից վարչական վարույթում օգտագործվող տեսանյութերը ոչ միշտ են լինում պատշաճ որակի, հնարավորություն ընձեռում նույնականացնել ենթադրյալ իրավախախտի տրանսպորտային միջոցը և այլն:

տրանսպորտային միջոցը կամ տրանսպորտային միջոցի կայանման ժամանակահատվածի վերաբերյալ վարչական վարույթի նյութերում առկա տվյալները և տեսանյութում արձանագրված տվյալները չեն համապատասխանել միմյանց, այսինքն՝ հնարավոր չի եղել նույնականացնել Հայցվորին պատկանող մեքենան:

➤ *Տեղանքի՝ որպես համայնքային վճարովի ավտոկայանատեղի կահավորված լինելը*

Թեև տեղանքի կահավորման խնդիրը Հայցվորների կողմից բարձրաձայնվել է մեծ թվով հայցերում, Դատարանը հազվադեպ է անդրադարձել դրան (դիտարկված գործերից միայն 2-ով), քանի որ արդեն իսկ բավարարել էր հայցն այլ հիմքերով: Նշված 2 գործերով<sup>20</sup> Դատարանն անհրաժեշտ է համարել պարզել, թե արդյո՞ք տվյալ դեպքում առկա է իրավախախտման փաստը, այն է՝ Հայցվորի տրանսպորտային միջոցի կայանման վայրում վճարովի ավտոկայանատեղի առկայությունը: Այս համատեքստում Դատարանն արձանագրել է, որ տեսանյութում հստակ երևում է, որ կայանման վայրում առկա չեն «Կայանման տեղ» և «Վճարովի ծառայություններ» ճանապարհային նշանները, ինչպես նաև համապատասխան տեղեկատվական ցուցանակը և/կամ կարմիր գծերով գծանշումը, ինչը նշանակում է, որ ՀՀ կառավարության 29.10.2012թ. թիվ 1293-Ն որոշմամբ սահմանված՝ վճարովի ավտոկայանատեղերի համար համապատասխան կահավորում ապահովելու վարչական մարմնի հանդիպական պարտականությունը կատարված չի եղել, ուստի Հայցվորի համար չէր կարող համարվել վճարովի ավտոկայանատեղ, և վերջինս պարտավոր չէր իմանալ դրա վճարովի լինելու, ինչպես նաև վճարման կարգի և պայմանների մասին, այսինքն՝ տվյալ դեպքով բացակայել է վիճարկվող որոշմամբ հայցվորին վերագրված իրավախախտման ինչպես օբյեկտիվ կողմը (բացակայել է տվյալ սահմանված կարգով ավտոկայանատեղին վճարովի հանդիսանալու համար պարտադիր կահավորման պայման հանդիսացող տեսանելի և մատչելի տեղադրված համապատասխան ցուցանակը), այնպես էլ սուբյեկտիվ կողմը՝ մեղքը, որպիսի պարագայում Հայցվորը չէր կարող ենթարկվել վարչական պատասխանատվության:

➤ *ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածի կիրառելիությունը*

Դիտարկված գործերից 20-ով Դատարանն անդրադարձել է ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածի կիրառելիության հարցին և նշել, որ թեև արձանագրության մեջ վկայակոչվում է «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և Երևան քաղաքի ավագանու 25.12.2018թ. թիվ 43-Ն որոշմամբ նախատեսված՝ տրանսպորտային միջոցի կայանատեղի տեղական պարտադիր գանձույթը, և դրանցում սահմանված տեղական վճարը չվճարելու համար վիճարկվող որոշմամբ Հայցվորը վարչական պատասխանատվության է ենթարկվել ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով՝ ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը համայնքային վճարովի

<sup>20</sup> ՎԴ/1206/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809931112](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931112); ՎԴ/0346/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809930128](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930128)

ավտոկայանատեղում կայանելու համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելու համար, Հայցվորը նշված նորմով վարչական տուգանքի ենթարկվել չէր կարող, քանի որ «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» ՀՀ օրենքով ՀՀ համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար սահմանված գանձույթը հանդիսանում է տեղական վճար, այլ ոչ թե տեղական տուրք, իսկ այդ տեղական վճարը չվճարելու համար նույն նորմով պատասխանատվության միջոց նախատեսված չէ: Դատարանը հիշեցրել է, որ օրենսդիրը հստակ սահմանել է ՀՀ համայնքներում տեղական տուրքերի տեսակները, և ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը ավտոկայանատեղում կայանելու համար տեղական տուրքի տեսակը դրանց թվում չէ<sup>21</sup>:

➤ *Վարչական վարույթ իրականացնելու ժամկետը*

Ըստ օրենքի՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննվում են տասնհինգօրյա ժամկետում: Դիտարկված բոլոր գործերով վարչական մարմինը վարույթն իրականացրել է 15 օրվանից ավելի ժամանակահատվածում, սակայն Հայցվորների ճնշող մեծամասնությունը հայցադիմումում չի բարձրացրել այդ հարցը: Դատարանը գործերի մեծամասնության դեպքում հայցը բավարարել է այլ հիմքով ու հիմնականում արդեն իսկ չի անդրադարձել վարույթի իրականացման ժամկետների պահպանման հարցին: Այնուամենայնիվ, որոշ գործերով Դատարանն իր նախաձեռնությամբ անդրադարձել է այդ հարցին և արձանագրել<sup>22</sup>, որ դիտարկվող վարույթի դեպքում կիրառելի են ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 277-րդ (Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության ժամկետները) հոդվածի պահանջները՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ՎԻՎ գործերի քննության բաժնի պետը պարտավոր է իրավախախտման գործը քննել 15-օրյա ժամկետում, որը սպառվելուց հետո վերջինս լիազորություն չունի կայացնելու վիճարկվող որոշումը:

Դատարանը փաստել է, որ վարույթ իրականացնելու 15-օրյա ժամկետը հաշվարկվում է այն պահից, երբ վիճարկվող վարչական ակտն ընդունված վարչական մարմնի պաշտոնատար անձին հանձնվում է իրավախախտման վերաբերյալ կազմված արձանագրությունը, որում նշվում է նաև տեսանյութը և իրավախախտման լուսանկարները<sup>23</sup>:

## Այլ գործեր

Ուսումնասիրվել են նաև գործեր, որոնք վերաբերել են

<sup>21</sup> Տե՛ս, օրինակ, ՎԴ/8747/05/19 [http://datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809939191](http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809939191)

<sup>22</sup> Տե՛ս, օրինակ, ՎԴ/0095/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809929893](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809929893)

<sup>23</sup> ՎԴ/0343/05/20, [http://datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809942509](http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809942509)

- կառուցապատման թույլտվության ժամկետների չպահպանման և շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու կապակցությամբ կիրառված տուգանքների վերաբերյալ վարչական ակտերի վիճարկմանը (33 գործ),
- գույքահարկի գանձմանը (26 գործ),
- առանց թույլտվության արտաքին գովազդ տեղադրելու համար նշանակված վարչական տույժի վիճարկմանը (25 գործ),
- Առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում առանց համապատասխան թույլտվության գործունեություն իրականացնելու համար նշանակված վարչական տույժի վիճարկմանը (16 գործ),
- ոչ սահմանված տեղերում առևտուր անելու համար նշանակված վարչական տույժի վիճարկմանը (10 գործ),
- Առևտրի, հանրային սննդի օբյեկտների վաճառողի, կենցաղային ծառայության օբյեկտի կատարողի և առևտրի իրականացման վայրի կազմակերպչի՝ պաշտոնատար անձանց կողմից օրենքով սահմանված պահանջները խախտելու համար նշանակված վարչական տույժի վիճարկմանը (9 գործ),
- աղբահանության վճարի գանձմանը (7 գործ),
- պետական և (կամ) համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնակամ զավթելուն և դրա հետևանքները չվերացնելուն (5 գործ) և այլն:

Նշված տեսակի գործերով արձանագրվել են հետևյալ խնդիրները՝

□ *Ապացույցների որակը*

ՀՀ վարչական դատարանը Երևան քաղաքում առանց թույլտվության արտաքին գովազդ տեղադրելու, շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու և ոչ սահմանված տեղերում առևտուր անելու համար վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումների վիճարկմանը վերաբերող գործերով մի շարք վճիռներում հիշեցրել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, առանց այլ ապացույցների հետ համադրման, ինքնուրույն ապացույց չէ, հատկապես, եթե այն կազմվել է ենթադրյալ իրավախախտի բացակայությամբ<sup>24</sup>:

Դատարանը նաև թույլատրելի չի համարել Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված այն լուսանկարները, որոնց վրա նշում չի եղել առ այն, թե ու՞մ կողմից է ձեռք

<sup>24</sup> Տե՛ս վճ/9244/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809939722](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809939722); վճ/5967/05/19 [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809936190](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809936190); վճ/0913/05/19 [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809930799](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930799); վճ/0704/05/20 , [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809942890](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809942890); վճ/0514/05/20 , [http://datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809942650](http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809942650); վճ/7864/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809938223](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809938223); վճ/2878/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809932880](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932880)

բերվել, ո՞ր ժամանակահատվածում, արդյո՞ք այդ լուսանկարն արտացոլում է նախկին, թե ենթադրյալ իրավախախտման կատարման պահի իրականությունը և այլն:

□ *Հայեցողական լիազորության իրացումը*

Այն գործերով, երբ կիրառվել է վարչական տույժ, իսկ իրավախախտման համար սահմանված սանկցիան հայեցողական է եղել, բավարարված հայցերով Դատարանն արձանագրել է, որ վիճարկվող որոշումը չի բովանդակում այն նկատառումները, որոնց հիման վրա վարչական մարմինն ընտրել է տուգանքի առավելագույն չափը: Վարչական վարույթի նյութերից ևս պարզ չէ՝ արդյոք վարչական մարմինն իրեն վերապահված հայեցողական լիազորությունն իրականացրել է վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքների պահպանմամբ, թե վերջինիս կողմից տույժի չափն ընտրվել է կամայականորեն: Որոշ, այդ թվում՝ Երևան քաղաքում առանց թույլտվության արտաքին գովազդ տեղադրելու համար նշանակված վարչական տույժի վիճարկման վերաբերյալ գործերով Դատարանը հենց հայեցողական լիազորության ոչ պատշաճ իրականացումը համարել է բավարար հիմք՝ հոգուտ Հայցվորի վճռելու համար և անգամ չի անդրադարձել այլ հիմքերի<sup>25</sup> /հակառակ մոտեցման մասին տե՛ս Դատական պրակտիկայի խնդիրներ բաժնում/:

➤ *Ձանցակազմի առկայությունը*

Որոշ գործերով Դատարանն անդրադարձել է վերագրվող իրավախախտման զանցակազմի առկայության հարցին: Օրինակ, Դատարանն արձանագրել է, որ «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված խախտման համար պատասխանատվություն է սահմանվում բացառապես գովազդատուների, գովազդ արտադրողների և գովազդակիրների նկատմամբ: Ըստ Դատարանի (բավարարված հայցերով)՝ վարույթում առկա չէր որևէ ապացույց, որի հետազոտությունից կարելի էր եզրահանգել, թե որպես ինչ է հանդես եկել տույժի ենթարկված ընկերությունը և վերջինս ենթարկվել է վարչական տուգանքի՝ առանց խնդրո առարկա գովազդի հետ նրա առնչությունը հիմնավորելու և հաստատելու<sup>26</sup> /հակառակ մոտեցման մասին տե՛ս Դատական պրակտիկայի խնդիրներ բաժնում/:

Մի խումբ գործերով Դատարանը նշել է, որ Երևանի քաղաքապետարանը ոչ իրավաչափ է պատասխանատվության ենթարկել, քանի որ իրավախախտման փաստն առկա չէ: Նման խնդիր արձանագրվել է այն գործերով, որտեղ Դատարանը պարզել է, որ թեև Հայցվորը ենթարկվել է պատասխանատվության ինքնակամ շինություն իրականացնելու համար, ՀՀ կառավարության 19.03.2015թ. Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման

<sup>25</sup> Տե՛ս, օրինակ, ՎԴ/1059/05/20 , [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809943286](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809943286), ՎԴ/0513/05/20 , [http://datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809942669](http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809942669), ՎԴ/0522/05/20 , [http://datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809942644](http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809942644),

<sup>26</sup> Տե՛ս, օրինակ, ՎԴ/0704/05/20 , [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809942890](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809942890), ՎԴ/0780/05/20 , [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809942901](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809942901)

նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին թիվ 596-Ն որոշման համաձայն՝ կատարված աշխատանքների դեպքում շինարարական թույլտվություն չի պահանջվում<sup>27</sup>:

➤ *Պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը*

Մի շարք գործերով Դատարանն արձանագրել է, որ ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 37-րդ (*Վարչական տույժ նշանակելու ժամկետները*) հոդվածով նախատեսված պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը չի պահպանվել: Դատարանը վկայակոչել է ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/8645/05/11 վարչական գործով 04.07.2013թ. որոշմամբ արտահայտած դիրքորոշումը, ըստ որի՝ «Ժամանակը որոշելու համար հիմք պետք է ընդունվի իրավախախտման վերաբերյալ արձանագրությունում նշված՝ իրավախախտման կատարման ժամանակը»: Երևանի քաղաքապետարանի աշխատակիցները, սակայն, ոչ բոլոր դեպքերում են արձանագրության մեջ նշում ենթադրյալ իրավախախտումը կատարելու ժամանակը, հատկապես ինքնակամ շինությունների առնչությամբ գործերով: Նման դեպքում Դատարանը եզրահանգել է, որ վարչական մարմինը չի պահպանել գործի բոլոր, այդ թվում՝ ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված ժամկետները բացահայտված լինելու հանգամանքները, և, համապատասխանաբար, պատշաճ չի կատարել վարչական իրավախախտման գործի վարույթը կարճելու հիմքի առկայությունը պարզելու իր պարտականությունը<sup>28</sup>:

➤ *Լսված լինելու իրավունքի իրացումը*

Մի շարք գործերով Դատարանը մատնանշել է արձանագրության կազմման հետ կապված թերություններ, մասնավորապես՝ Հայցվորը գրկվել է իրեն վերագրված իրավախախտման կապակցությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու պահին բացատրություններ ներկայացնելու, խնդրո առարկա արձանագրության բովանդակության վերաբերյալ դիտողություններ ներկայացնելու, ինչպես նաև իր իրավունքների մասին իրազեկ լինելու հնարավորությունից:

Ըստ Դատարանի՝ լսված լինելու իրավունքի իրացումը չի ապահովվել, ի թիվս այլնի, վարչական վարույթի հարուցման մասին չձանուցելու կամ լսումների մասին մեկ օր առաջ ձանուցելու արդյունքում:

➤ *Ընթացակարգային բացթողումներ*

<sup>27</sup> Տե՛ս, օրինակ, ՎԴ/10895/05/19

[http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809941522](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809941522)

<sup>28</sup> Տե՛ս, օրինակ, ՎԴ/0118/05/19,

[http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809929857](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809929857), ՎԴ/1583/05/19

[http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809931480](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931480)

*Կառուցապատումը համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում չավարտելը*

ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 154.1-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման վերաբերյալ գործերով Դատարանը հիմնականում արձանագրել է, որ Երևանի քաղաքապետարանը նախատեսված զանցանքի համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու դեպքում թերանում է և չի կատարում դրա համար անհրաժեշտ նախապայման հանդիսացող «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված՝ շինարարության թույլտվություն տվող մարմնի՝ կառուցապատողին նախազգուշացնելու պարտականության պատշաճ կատարումը: Հետևաբար, Դատարանը եզրահանգել է, որ նման դեպքում Պատասխանող վարչական մարմնի կողմից նշված պարտականությունը չկատարելու պայմաններում Հայցվորին վարչական պատասխանատվության ենթարկելն իրավաչափ չէ, անկախ այն հանգամանքից, որ շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետում կառուցապատումը չի ավարտվել:

Այս խնդիրը կազմակերպության կողմից արձանագրվել է նաև նախորդ տարիներին՝ 2018 և 2019 թթ. կայացված դատական ակտերը ուսումնասիրելու արդյունքում: Մա ցույց է տալիս այս խումբ գործերով Երևանի քաղաքապետարանի անհետևողական վարքագիծը վերջինիս դեմ հարուցված վարույթների, Դատարանի կողմից կայացված վճիռների նկատմամբ:

*Գույքահարկի գանձում*

Գույքահարկի գանձման վերաբերյալ վեճերով վարչական մարմինը վարչարարություն իրականացնելիս վարչական ակտում չի ներառել փաստական հիմքերը, մասնավորապես որոշակի չի եղել, թե որ տարվա համար է գանձվում գույքահարկը, քանի որ նշել է, օրինակ, «2017-2018 տարիների համար»: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ գույքահարկի պարտավորությունը վարչական մարմինը հաշվարկել է ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/1383/05/09 վարչական գործով 04.12.2009 թ. որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման խախտմամբ, և հաշվի չի առնվել կիրառելի օրենքներով այդ ժամանակահատվածի համար կիրառելի վաղեմության ժամկետը:

Գույքահարկի գանձման վերաբերյալ գործերով Դատարանն արձանագրել է, որ գույքահարկի գծով վճարման պարտականություն առաջանալու համար անձը պետք է ունենա հարկվող օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունք, և այդ իրավունքը պետք է լինի ոչ թե ձևական՝ գուտ թղթի վրա արձանագրված իրավունք, այլ վերջինս ունենա այն տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու փաստացի իրավունք : Օրինակ՝ գույքի գողացված լինելու կամ խոտանված կամ ժամանակավոր հաշվառումից հանված լինելու պարագայում գույքահարկ չպետք է գանձվի: Այս առումով Դատարանը նշել է, որ տրանսպորտային միջոցները խոտանված համարելու և տրանսպորտային միջոցների սեփականության իրավունքի պետական գրանցման և պետական հաշվառման (վերահաշվառման) համակարգչային շտեմարանից հանելու մասին 25 հունիսի 2015 թվականի N 708-Ս Կառավարության որոշման



համաձայն, տրանսպորտային միջոցը համարվում է 2010 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ խոտանված և հանվում է տրանսպորտային միջոցների սեփականության իրավունքի պետական գրանցման և պետական հաշվառման (վերահաշվառման) համակարգչային շտեմարանի գործող հատվածից այն փաստի ուժով, որ նշված տրանսպորտային միջոցի համար երբևէ չի կնքվել ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանագիր, այդ տրանսպորտային միջոցով կատարված՝ ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 129.2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտումից (*Հայաստանի Հանրապետության տարածքում հաշվառված տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (վարձակալի) կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող (ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով իրեն տրամադրված) յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի համար կնքված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր չունենալը, որը տևել է ավելի քան տասն օր*) բացի որևէ այլ իրավախախտման դեպք 2011 թվականի հունվարի 1-ից հետո չի արձանագրվել: Այսինքն՝ նշված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում վարչական մարմինը չէր կարող հաշվառումից ժամանակավորապես հանված տրանսպորտային միջոցի համար Հայցվորի նկատմամբ գույքահարկի գծով հաշվարկել որևէ պարտավորություն, քանի որ նրա նկատմամբ այդ մասով օրենքով սահմանված է արտոնություն, ինչն էլ վարչական մարմինն անտեսել է, ավելին՝ հիշյալ հանգամանքը վիճարկվող որոշումն ընդունելիս ընդհանրապես չի դարձրել քննարկման առարկա<sup>29</sup>:

Մի քանի գործով Դատարանն արձանագրել է, որ Երևանի քաղաքապետարանը/վարչական շրջանները սխալ են մեկնաբանել սնանկության համատեքստում սեփականության իրավունքի ծագման հիմքը, ինչի արդյունքում ոչ իրավաչափորեն փորձել են նախորդ տարիների համար դատական վճռով սեփականության իրավունք ձեռք բերած անձից գանձել գույքահարկ, մինչդեռ գույքահարկ հաշվարկելու և վճարելու պարտավորությունն օրենքի ուժով ծագել է այն օրվանից, երբ նշված գույքը հանձնվել է նրա տիրապետմանը:

Արձանագրվել են դեպքեր, երբ միևնույն ժամանակահատվածին վերաբերող պարտավորությունների գումարի գանձման առնչությամբ կրկնակի վարույթ է հարուցվել ու իրականացվել: Ըստ Դատարանի՝ դա չի բխում վարչարարության տնտեսավարության սկզբունքից, ըստ որի՝ վարչական մարմինն իր լիազորություններն իրականացնելիս պարտավոր է գործել այնպես, որպեսզի առանց իր լիազորությունների կատարմանը վնասելու՝ առավել սեղմ ժամկետում, առավել բարենպաստ արդյունքի հասնելու համար ապահովի իր տնօրինմանը հանձնված միջոցների առավել արդյունավետ օգտագործումը:

Արձանագրվել է նաև մտահոգության տեղ տվող այլ պրակտիկա. գույքահարկի գանձման գործերով Երևանի քաղաքապետարանը դատարան է դիմում նման հայց ներկայացնելու համար նախատեսված ժամկետի՝ 10 տարվա վերջին տարին լրանալու ժամանակ, իսկ մինչ

<sup>29</sup> Տե՛ս, օրինակ, ՎԴ/1500/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809931419](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931419)

այդ՝ տարիների ընթացքում չի ծանուցում հարկատուին՝ ակնկալելով ավելի բարձր գանձույթ: Երևանի քաղաքապետարանը չարաշահում է Հարկային օրենսգրքի 233-րդ (Տեղական բյուջե վճարման ենթակա անշարժ գույքի հարկի գումարի հաշվարկման կարգը) և 248-րդ (Տեղական բյուջե վճարման ենթակա փոխադրամիջոցների գույքահարկի գումարի հաշվարկման կարգը) հոդվածներով նախատեսված դրույթներն առ այն, որ գույքահարկ վճարողներին պետք է օրենքով սահմանված ժամկետում ներկայացվեն փոխադրամիջոցների գույքահարկի և անշարժ գույքի հարկի վճարման ծանուցագրեր, որոնց ժամանակից ուշ ներկայացնելը կամ չներկայացնելը թեև հարկ վճարողին չի ազատում հարկ վճարելու պարտականությունից:

### Դատական պրակտիկայի խնդիրներ

Դիտարկված գործերի ուսումնասիրության ընթացքում արձանագրվել են նույն տեսակի գործերի լուծման համատեքստում ոչ միատեսակ մոտեցումներ:

Այդպես, ավտոտրանսպորտային միջոցը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելու համար նշանակված վարչական տույժի վիճարկմանը վերաբերող 11 մերժված հայցերի քննության և Դատարանի պատճառաբանության առումով խնդրո առարկա գործերով Դատարանը այլ մոտեցում է որդեգրել: Մասնավորապես Դատարանը ուսումնասիրել է գործում առկա լուսանկարները և տեսանյութը և գտել, որ դրանցում ապացուցվում է ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով իրավախախտում կատարելու փաստը, հաշվի է առել նաև «Փարկինգ ՍԻԹի Սերվիս» ՓԲԸ-ի սնօրենի գրությունը, ըստ որի՝ տեղանքը կահավորված է եղել համապատասխան նշաններով և ցուցանակներով:

Հատկանշական է, որ վերը նշված 3 գործերից արձանագրության կազմման հետ կապված հարցին անդրադարձել է կատարվել միայն մեկում: Դատարանը 6 վճռով, որոնցով հայցը մերժվել է<sup>30</sup>, նշել է, որ անհիմն է Հայցվորի այն փաստարկը, որ վերջինիս բացակայությամբ է կազմվել արձանագրությունը, քանի որ իրեն ուղղված ծանուցմամբ վերջինս հրավիրված է եղել վարչական վարույթին, իսկ նման դեպքում զրկված չէր հայտնելու իր դիրքորոշումն իրավախախտման վերաբերյալ: Ուստի գտել է, որ վարչական մարմինը գործել է իրավաչափ, առկա չեն ակտն անվավեր ճանաչելու հիմքեր:

Նշված ակտերից բողոքարկվել են միայն 2-ը, որոնցից զեկույցը գրելու օրվա դրությամբ միայն 1-ով էր ՀՀ վերաքննիչ դատարանը կայացրել ակտ<sup>31</sup>: Հատկանշական է, որ Վերաքննիչ

<sup>30</sup> ՎԴ/4457/05/19 [http://datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809934578](http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934578), ՎԴ/6765/05/19 [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809937076](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809937076), ՎԴ/3671/05/19 [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809933744](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809933744), ՎԴ/6273/05/19 [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809936592](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809936592), ՎԴ/7148/05/19 [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809937491](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809937491), ՎԴ/6720/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809937061](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809937061)

<sup>31</sup> ՎԴ/6765/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809937076](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809937076)

վարչական դատարանը բավարարել է վերաքննիչ բողոքը՝ արձանագրելով, որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը ենթադրյալ իրավախախտին մասնակից դարձնելու, արձանագրությունը վերջինիս ներկայությամբ կազմելու օրենքի պահանջը ձևական բնույթ չի կրում, արձանագրությունը ենթադրյալ իրավախախտի ներկայությամբ կազմելու օրենսդրական պահանջը կարևոր երաշխիք է ողջ վարչական վարույթի ընթացքում ենթադրյալ իրավախախտի իրավունքների, այդ թվում՝ արձանագրությունը կազմելիս բացատրություն տալու իրավունքի իրացումն ապահովելու համար: Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը գտել է, որ վիճարկվող որոշումն ընդունվել է օրենքի խախտմամբ, ուստի հայցը ենթակա է բավարարման:

Մեկ այլ գործով<sup>32</sup>, անդրադառնալով Հայցվորի այն փաստարկին, որ արձանագրությունը չի համապատասխանում ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածի պահանջներին, ՀՀ վարչական դատարանը գտել է, որ նշվածը չի կարող Երևանի քաղաքապետարանի որոշման անվավերության հիմք հանդիսանալ: Այսպես, Դատարանը հարկ էր համարել նշել, որ ի տարբերություն նյութական իրավունքի պահանջների խախտման՝ ընթացակարգային՝ արձանագրության կազմման ձևին ներկայացվող պահանջների խախտումը միշտ չէ, որ պետք է անվերապահորեն հանգեցնի վարչական ակտի անվավերության: Դատարանը գտել է, որ ընթացակարգային նորմերի խախտումը կարող է հանգեցնել վարչական ակտի անվավերության, եթե այն ազդել է վիճարկվող վարչական ակտի նյութական իրավաչափության վրա և/կամ դրա հետևանքով խախտվել է շահագրգիռ անձի սուբյեկտիվ իրավունքը կամ ազատությունը:

Պետք է նշել նաև, որ Դատարանը գործերից մեկով<sup>33</sup> այլ մոտեցում է ցուցաբերել: Անդրադառնալով Հայցվորի այն պնդմանը, որ արձանագրությունը կազմվել է ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածով արձանագրությանը ներկայացվող պահանջների խախտմամբ՝ Դատարանը գտել է, որ այն հիմնավոր է, քանի որ արձանագրությունը պետք է կազմվի ՎԻՎ ՀՀ օրենսգրքով սահմանված կանոնների համաձայն: Մասնավորապես՝ չէր պահպանվել ենթադրյալ իրավախախտի մասնակցության պահանջը, առկա չէր նրա ստորագրությունը, ինչպես նաև նշում այն մասին, որ իրավախախտում կատարած անձը հրաժարվել է այն ստորագրելուց, բացակայել էր նաև նշում առ այն, որ նրան բացատրվել են ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները:

Գործերից մեկով<sup>34</sup> Վերաքննիչ դատարանում բողոքաբեր կողմը (Հայցվորը) պնդել է, որ Վարչական դատարանը, իրավախախտումը համարելով ապացուցված՝ չի անդրադարձել արձանագրության ոչ իրավաչափ լինելու հարցին, իսկ Դատարանի կողմից հայցի մերժման հիմքում դրվել է այն պատճառաբանությունը, որ տեսանյութից պարզ երևում է Հայցվորին պատկանող տրանսպորտային միջոցի համարանիշը, ինչպես նաև երևում է, որ տվյալ

<sup>32</sup> ՎԴ/0293/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809930092](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930092)

<sup>33</sup> ՎԴ/10404/05/19 [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809940930](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809940930)

<sup>34</sup> ՎԴ/0871/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809930754](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930754)

հատվածում առկա են կարմիր գծեր: Նշված գործը բողոքարկվել է վերաքննության կարգով: Վերաքննիչ վարչական դատարանը փաստել է, որ գործում առկա տեսանյութով և լուսանկարներով հնարավոր չէ ամբողջությամբ նույնականացնել նշված հատվածում կայանված այն տրանսպորտային միջոցը, որը պատկանում է Հայցվորին, ու անհիմն է համարել հայցի մերժման հիմքում Վարչական դատարանի կողմից դրված եզրահանգումները: Անդրադառնալով արձանագրության կազմմանը ներկայացվող օրենսդրական իրավակարգավորումներին՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը ենթադրյալ իրավախախտումը կատարած անձի ներկայությամբ կազմելու օրենսդրի իմպերատիվ պահանջի սահմանումն ինքնանպատակ չէ և առաջնահերթ կոչված է ապահովելու հանրային-իշխանական լիազորություններով օժտված պետական և (կամ) տեղական ինքնակառավարման մարմնի առջև տվյալ անձի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի իրացման հնարավորությունը, ինչպես նաև նպատակ է հետապնդում ապահովելու վարչական իրավախախտման սուբյեկտի պարզումը, որպիսի պահանջի կատարումը հնարավորություն է տալիս նաև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության արդյունքում վարչական պատասխանատվության միջոց նշանակել իրավախախտումը թույլ տված անձի նկատմամբ: Վերաքննիչ դատարանը վկայակոչել է Վճռաբեկ դատարանի դիրքորոշումն առ այն, որ ՎԻՎ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման կատարման համար համապատասխան արձանագրության կազմմանը ներկայացվող օրենսդրական պահանջները կարգավորվում են ոչ թե Երևան քաղաքի ավագանու 25.12.2012թ. թիվ 563-Ն որոշմամբ սահմանված՝ վարչական իրավախախտման արձանագրությունն իրավախախտի բացակայությամբ կազմելու և հետո վերջինիս ուղարկելու, այլ՝ ՎԻՎ օրենսգրքի 255-րդ հոդվածով սահմանված՝ վարչական իրավախախտման արձանագրությունն իրավախախտի ներկայությամբ կազմելու և առձեռն վերջինիս հանձնելու կանոնով:

### *Արտաքին գովազդ տեղադրելը*

Խնդրո առարկա 25 դիտարկված գործերից 9-ը մերժվել են: Բոլոր 9 ակտերը բողոքարկվել են Հայցվորի կողմից:

Ինչ վերաբերում է մերժված հայցերի, ապա Վարչական դատարանը համարել է, որ Երևանի քաղաքապետարանը հիմնավորել է, որ վերագրվող իրավախախտումը կատարվել է հենց Հայցվոր կազմակերպության կողմից, և հստակեցրել է, թե որպես ինչ է հանդես եկել այն<sup>35</sup>: Մասնավորապես Դատարանը գտել է, որ գործի շրջանակներում Հայցվոր կազմակերպությունը հանդես է եկել որպես Գովազդակիր, ով տրամադրելով համապատասխան միջոցներ, առանց համապատասխան թույլտվության տեղաբաշխել և տարածել է գովազդը: Դատարանը նշել է, որ Հայցվոր կողմն ընդունում է այն փաստը, որ Երևանի քաղաքապետարանի հետ ունի կնքված հողի վարձակալության պայմանագրեր և

<sup>35</sup> Տե՛ս, օրինակ, ՎԳ/0754/05/20, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809942857](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809942857)

դրանց հիման վրա ունի տեղադրված գովազդային վահանակներ, որոնցից մեկի վրա էլ տեղադրված է եղել սույն գործով խնդրո առարկա գովազդային տեղեկությունը: Ընդ որում, ակնհայտ է, որ Հայցվոր կազմակերպությունը, հանդես գալով որպես տվյալ գովազդային վահանակի սեփականատեր, կարող էր ինչպես անձամբ այն օգտագործել ըստ նշանակության, այնպես էլ թույլատրել այլ անձանց գովազդային տեղեկություններ տեղադրել այդ վահանակին: Հետևաբար, Դատարանը գտել է, որ անհիմն է նաև Հայցվորի այն պատճառաբանությունը, որ վարչական ակտում չի անհատականացվել և չի հստակեցվել, թե ում կողմից է տեղադրվել գովազդը, չի ապացուցվել, որ այն եղել է հենց Հայցվորի կողմից տեղադրված գովազդը:

Վարչական դատարանը գտել է, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ՎԻՎ գործերի քննության բաժնի պետը, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելով և կայացնելով վիճարկվող որոշումը, պարզել է նաև հենց Հայցվորի կողմից վարչական իրավախախտում կատարելու փաստը, Հայցվորը մեղավոր է այն կատարելու մեջ և ենթակա վարչական պատասխանատվության, քանի որ գործով չի հաստատվում այն հանգամանքը, որ Հայցվորը ունեցել է համապատասխան թույլտվություն արտաքին գովազդ տեղադրելու համար: Վարույթում առկա նյութերով հիմնավորվում է նաև, որ Հայցվորի կողմից առանց համապատասխան թույլտվության տեղադրվել է արտաքին գովազդ: Ավելին՝ Հայցվորը, պատշաճ ծանուցված լինելով, չի ներկայացել վարչական վարույթի լուսմներին և չի ներկայացրել իր օգտին առկա որևէ ապացույց, որը կբացատրեր վերջինիս պատասխանատվությունը:

Հատկանշական է, որ այն դեպքերում, երբ հայցը մերժվել է, Դատարանը չի քննարկել հայեցողական լիազորություն իրականացնելու հարցը:

Վերաքննության կարգով բողոքարկված 9 ակտերից զեկույցը գրելու օրվա դրությամբ միայն 1-ով է առկա Վերաքննիչ վարչական դատարանի որոշում<sup>36</sup>: Նշված գործով Վերաքննիչ վարչական դատարանը բավարարել է վերաքննիչ բողոքը և անհիմն է համարել Վարչական դատարանի եզրահանգումը, որ գործում առկա ապացույցներով անհատականացվել և հստակեցվել է, որ գովազդը հենց Հայցվորի կողմից է տեղադրվել, քանի որ գործում առկա առանց ենթադրյալ իրավախախտի մասնակցության կազմած արձանագրությամբ և լուսանկարներով այդ հանգամանքները չեն հաստատվում: Վարչական մարմնի կողմից գործի համար էական նշանակություն ունեցող բոլոր հանգամանքների մասին ամբողջական տեղեկատվությունը հաշվի առնելը պարտականության թերի կատարումն ընթացակարգային սխալ է, որը հանգեցնում է վարչական ակտի ոչ իրավաչափության: Վերաքննիչ վարչական դատարանը վերահաստատել է ենթադրյալ իրավախախտի մասնակցությամբ արձանագրություն կազմելու կարևորությունը: Վերաքննիչ վարչական դատարանը նաև անդրադարձել է հայացողական լիազորության իրացման միջոցով Հայցվորի նկատմամբ կիրառված պատասխանատվության միջոցի ընտրության իրավաչափ լինելու հանգամանքին

<sup>36</sup> ՎԴ/0483/05/20, [http://datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809942676](http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809942676)

և գտել է, որ վարչական մարմինը տվյալ պարագայում «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2.1-ին մասով նախատեսված իրավական նորմով սահմանված պատասխանատվության միջոց ընտրելու իր հայեցողական լիազորությունն իրականացրել է համաչափության սկզբունքի էությունն անտեսելով և առանց որևէ հիմնավորման պատասխանատվության միջոց է ընտրել տուգանքի առավելագույն չափը:

### Կարճման որոշումներ

Ուսումնասիրության շրջանակներում վերլուծվել են նաև Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանների ղեկավարների դեմ բերված գործերով 228 կարճման որոշումներ: Դիտարկված գործերից 172-ը (75%) վերաբերել են վարչական տույժ նշանակելու մասին որոշումների վիճարկմանը:

Դիտարկված 228 որոշումներից 198 դեպքում (87%) գործը կարճվել է, քանի որ վեճն ըստ էության սպառվել է: Հատկանշական է, որ 198 գործից 196-ի դեպքում վարչական մարմինը վիճարկվող որոշումն անվավեր է ճանաչել<sup>37</sup>, որից 2 դեպքում վիճարկվող որոշումն անվավեր էր ճանաչվել մինչև Դատարանի կողմից հայցը վարույթ ընդունելը, սակայն Դատարանը դրա մասին տեղեկացվել էր վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո: 19 դեպքում գործը կարճվել է Հայցվորի՝ հայցից հրաժարվելու հիմքով, այդ թվում՝ Պատասխանողի կողմից հայցվող գործողությունները կատարելու արդյունքում<sup>38</sup>:

Թեև դիտարկված գործերի կեսից ավելիի դեպքում՝ գործերից 127-ով (56%) տեղի է ունեցել միայն մեկ նիստ (ըստ էության՝ որոշման հրապարակման նիստ միայն), այնուամենայնիվ, Դատարանը ստիպված է եղել իրականացնել որոշ գործողություններ՝ օրինակ, գրասենյակում հայցադիմումի մուտքագրում, հանձնում Դատարանի կազմին, ընթացիկ աշխատանքների իրականացում, որոշումների կայացում, առաքում կողմերին և այլն: Արդյունքում ավելանում են Դատարանի ծանրաբեռնվածությունը և ծախսերը:

Հատկանշական է, որ 22 գործով որևէ դատական նիստ չի նշանակվել, թեև վարույթ ընդունելուց մինչև գործով դատական ակտ կայացնելն անցել է 6 օրից<sup>39</sup> մինչև 7 ամիս<sup>40</sup>, 5 գործով կայացել է 5-ից ավելի նիստ: Դիտարկված գործերից ամենակարճը տևել է 6 օր, իսկ ամենաերկարը՝ 1 տարի 3 ամիս<sup>41</sup>:

<sup>37</sup> Երկու գործով գործը կարճվել է հայցվորի միջնորդության հիման վրա, քանի որ Երևանի քաղաքապետը կայացրել է հայցվող բարենպաստ ակտերը:

<sup>38</sup> Տե՛ս, օրինակ, Դ/8851/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809939296](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809939296)

<sup>39</sup> Տե՛ս, ՎԴ/0883/05/19 [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809930779](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930779)

<sup>40</sup> Տե՛ս, Դ/1253/05/20, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809943530](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809943530)

<sup>41</sup> Տե՛ս, ՎԴ/5854/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809936077](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809936077)

Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կայացվում են վիճարկվող վարչական ակտեր, և երբ Դատարան հայց է ներկայացվում (հատկապես ավտոտրանսպորտային միջոցը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելու համար նշանակված վարչական տույժի վիճարկման գործերի զգալի մասի դեպքում), Երևանի քաղաքապետարանը հայցադիմումի օրինակը ստանալուն պես հենց ստանալու օրն իր նախաձեռնությամբ վերացնում է այդ վարչական ակտը, օրինակը ներկայացնում է Դատարան և կից գրությամբ խնդրում է մերժել հայցադիմումի ընդունումը՝ հայցը առարկայագուրկ լինելու հիմքով: Նշված դեպքում, եթե Դատարանը որոշումը ստանում է հայցը վարույթ ընդունելուց հետո՝ անկախ ընդունման ամսաթվից, ապա առաջանում են դատական ծախսեր:

Դիտարկված կարճման մասին որոշումների ճնշող մեծամասնության դեպքում՝ 183 գործով (92%) Հայցվորն օրենքի ուժով ազատված է եղել պետական տուրք վճարելու պարտականությունից:

Դիտարկված գործերից 85-ով Դատարանը հիմնավոր է համարել և բավարարել է ներկայացուցչի ծախսը հատուցելու պահանջը: Արդյունքում, ներկայացուցչի ծախսի հատուցման ենթակա գումարը կազմել է 697 000 ՀՀ դրամ<sup>42</sup>:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարող են եզրակացնել, որ Երևանի քաղաքապետարանը պատշաճ վարչարարություն իրականացնելու միջոցով կարող է կանխել դատարանի և համայնքի ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործումը:

### Վարչական դատարանի լրացուցիչ որոշումներ

Մշտադիտարկման արդյունքները հաստատվում են նաև ՀՀ վարչական դատարանի դատավորների կողմից կայացված լրացուցիչ որոշումներում արտահայտված դիրքորոշմամբ<sup>43</sup>: Դատարանը մի քանի անգամ Երևանի քաղաքապետի ուշադրությունը հրավիրել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի պաշտոնատար անձանց կողմից պարբերաբար թույլ տրվող էական և կոպիտ խախտումների վրա:

Օրինակ, ուսումնասիրված լրացուցիչ որոշումներից մեկով Դատարանը հիշեցրել է ՀՀ վճռաբեկ դատարանի իր 2019 թվականի մարտի 22-ի թիվ ՎԴ/0150/05/16 վարչական գործի շրջանակում կայացված նախադեպային որոշմամբ արտահայտած դիրքորոշումը և ընդգծել,

<sup>42</sup> Հատուցման պահանջ ոչ բոլոր գործերով է ներկայացվել:

<sup>43</sup> ՎԴ/0640/05/20 , [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809942851](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809942851), ՎԴ/7791/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809938194](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809938194), ՎԴ/9875/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809940450](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809940450), ՎԴ/6390/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809936695](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809936695)

որ Վճռաբեկ դատարանի կողմից իրավական նորմի վերլուծությունը պարտադիր է, եթե Դատարանը նորմատիվ իրավական ակտի այլ հիմնավոր մեկնաբանություն չի ներկայացնում:

Դատարանն արձանագրել է, որ ՀՀ վարչական դատարանի կողմից կայացված դատական ակտերը Երևանի քաղաքապետարանի կողմից չեն վիճարկվում և մտնում են օրինական ուժի մեջ, սակայն Երևանի քաղաքապետարանի որդեգրած քաղաքականությունում ոչինչ չի փոխվում և վերջիններս շարունակում են անտեսել թե՛ ՀՀ վճռաբեկ և թե՛ ՀՀ վարչական դատարանների օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով արձանագրված խնդիրները և շարունակում են նույնաբովանդակ որոշումներ կայացնել՝ նույն ընթացակարգային խախտումներով, որոնք հանգեցնում են անձանց իրավունքների էական և կոպիտ խախտման, ինչի արդյունքում վնաս է կրում պետությունը, քանի ծախսում է մարդկային և ֆինանսական ռեսուրսներ:

Դատարանը նաև արձանագրել է, որ Երևանի քաղաքապետարանը որդեգրել է՝ հայցադիմումը ներկայացնելու դեպքում իր նախաձեռնությամբ վարչական ակտն անվավեր ճանաչելու և դատարանից հայցը մերժել հայցելու չարդարացված պրակտիկա: Եթե նման որոշում կայացվեր մինչև հայց ներկայացնելը, ապա դատարանն անտեղի չէր ծանրաբեռնվի և չէին ծախսվի մարդկային և նյութական ռեսուրսները:

## ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Դիտարկված գործերի 68%-ը բավարարվել են ամբողջությամբ կամ մասնակի: Դիտարկված գործերից 76%-ի դեպքում վիճարկվել են վարչական տույժի ենթարկելու մասին որոշումները: Դիտարկված գործերի 40%-ը վերաբերել են ավտոտրանսպորտային միջոցը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելու համար նշանակված վարչական տույժի վիճարկմանը:

Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են միանման համակարգային խնդիրներ, որոնց վերաբերյալ ՀՀ վարչական դատարանը բազմիցս հստակ դիրքորոշում է հայտնել, այդ թվում՝ կիրառելի օրենսդրության և դրանով պայմանավորված վարչական վարույթ իրականացնելու պահանջների, ապացույցների որակի ու կիրառվող ժամկետների վերաբերյալ: Ավելին, Դատարանը կայացրել է լրացուցիչ որոշումներ, որոնցում հատուկ հրավիրել է Երևանի քաղաքապետի ուշադրությունը արձանագրված համակարգային խնդիրներին, ընդգծել է, որ դրանք կրում են շարունակական բնույթ՝ չնայած բազմաթիվ դատական ակտերին, որոնցում արձանագրվում է ոչ պատշաճ վարչարարություն, սակայն Երևանի քաղաքապետարանի վարքագիծը չի փոխվում:



Արձանագրվել է նաև, որ Երևանի քաղաքապետարանի դեմ բերված հայցերով դիտարկված գործերից 60%-ում (հիմնականում վարչական տույժերի վիճարկման գործերով) ո՛չ Հայցվորը, ո՛չ էլ Պատասխանողը չեն ապահովել ներկայությունը դատական նիստերին:

Ավելին, Երևանի քաղաքապետարանը և վարչական շրջանները գործերի 84%-ով (231 գործով) չեն ապահովել ներկայությունը գործի քննության ժամանակ, իսկ ավտոտրանսպորտային միջոցը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելու համար նշանակված վարչական տույժի վիճարկման վերաբերյալ դիտարկված 109 գործերից և ոչ մեկով Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչները չեն ներկայացել Դատարան:

Ուսումնասիրության համաձայն՝ ՀՀ վարչական դատարանն արձանագրել է շարունակական բնույթ կրող մի շարք խնդիրներ, մասնավորապես՝

- բազմակողմանի քննություն չիրականացնելը, այդ թվում՝ լաված լինելու իրավունքի իրացումը չապահովելը, ներառյալ՝ արձանագրության կազմմանը ենթադրյալ իրավախախտին մասնակից չդարձնելու և իրավունքներն ու պարտականությունները չբացատրելու, վարույթով նիստի մասին պատշաճ չճանուցելու պատճառով,
- ավելի ցածր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտի կիրառումը,
- ոչ վերաբերելի ապացույց ներկայացնելը և պատասխանատվության ենթարկելը՝ զանցակազմի բացակայության կամ զանցակազմը հաստատված չլինելու պարագայում,
- վարչական վարույթ իրականացնելու ժամկետները չպահպանելը,
- հայեցողական լիազորության իրացումը համաչափության և կամայականության արգելքի սկզբունքների խախտմամբ,
- պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը չպահպանելը:

Կազմակերպության կողմից իրականացված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ չնայած ՀՀ վարչական դատարանի կողմից բազմաթիվ վճիռների կայացմանը, նույնանման խնդիրների արձանագրմանը՝ Երևանի քաղաքապետարանի որդեգրած քաղաքականությունում ոչինչ չի փոխվում: Վերջինս շարունակում է անտեսել թե՛ ՀՀ վճռաբեկ, և թե՛ ՀՀ վարչական դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով արձանագրված խնդիրները, նույնաբովանդակ որոշումներ կայացնել՝ նույն ընթացակարգային խախտումներով, որոնք հանգեցնում են անձանց իրավունքների էական և կոպիտ խախտման, որի արդյունքում վնաս է կրում պետությունը, քանզի նման հայցեր հարուցելու և բավարարելու արդյունքում պետությունը ծախսում է մարդկային և ֆինանսական ռեսուրսներ:

Արձանագրվել է նաև, որ Երևանի քաղաքապետարանը իր դեմ հայցադիմումի դեպքում սեփական նախաձեռնությամբ վարչական ակտն անվավեր է ճանաչում՝ դատարանից հայցը

մերժելու ակնկալիքով: Նշված դեպքում, եթե Դատարանը որոշումը ստանում է հայցը վարույթ ընդունելուց հետո՝ անկախ ընդունման ամսաթվից, ապա առաջանում են դատական ծախսեր:

Երևանի քաղաքապետարանը ոչ միայն քայլեր չի ձեռնարկում շտկելու համակարգային և շարունակական բնույթ ունեցող խնդիրները, որի արդյունքում ավելանում են այդ մարմնի դեմ բերված հայցերը, այլև անգամ չի ներկայանում դատարան, հայցին պատասխան չի ներկայացնում և այլն:

Հաշվի առնելով նշված պրակտիկան, կարող ենք եզրահանգել, որ Երևանի քաղաքապետարանը միտումնավոր չի շտկում իր վարչարարությունը, չի համապատասխանեցնում Դատարանի, այդ թվում՝ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտած դիրքորոշմանը:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Երևանի քաղաքապետարանին՝

- Ապահովել վարչական վարույթի իրականացումը ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 277-րդ (*Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության ժամկետները*) հոդվածով նախատեսված ժամկետներում, այդ թվում՝ ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով նախաձեռնած վարույթների համար նախատեսված 15-օրյա ժամկետում:
- Ապահովել ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 37-րդ (*Վարչական տույժ նշանակելու ժամկետները*) հոդվածով նախատեսված պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետի պահպանումը, այդ թվում՝ հաշվի առնելով ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/8645/05/11 վարչական գործով 04.07.2013թ. որոշմամբ արտահայտած դիրքորոշումը, ըստ որի՝ «Ժամանակը որոշելու համար հիմք պետք է ընդունվի իրավախախտման վերաբերյալ արձանագրությունում նշված՝ իրավախախտման կատարման ժամանակը»:
- Ապահովել վարույթին ներգրավված անձանց լսված լինելու իրավունքը, այդ թվում՝ լսումների մասին պատշաճ ծանուցելու միջոցով, ինչպես նաև ենթադրյալ իրավախախտին տրամադրել ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների վերաբերյալ տեղեկատվություն:
- Ապահովել ՀՀ կառավարության 29.10.2012թ. թիվ 1293-Ն որոշմամբ սահմանված՝ վճարովի ավտոկայանատեղերի համար համապատասխան կահավորում ապահովելու վարչական մարմնի հանդիպական պարտականության կատարումը, իսկ վարչական

վարույթի շրջանակներում՝ կահավորման սահմանված պահանջներին համապատասխանության ստուգումը:

- Ապահովել վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթների շրջանակներում բացի իրավախախտման մասին արձանագրությունից, վերաբերելի ապացույցների, այդ թվում՝ համապատասխան որակի լուսանկարների առկայությունը գործում: Մասնավորապես, իրավախախտումը փաստող լուսանկարների վրա պարտադիր է նշումն առ այն, թե ո՞ւմ կողմից է այն ձեռք բերվել, ո՞ր ժամանակահատվածում, արդյո՞ք այդ լուսանկարն արտացոլում է նախկին՞, թե՞ ենթադրյալ իրավախախտման կատարման պահը և այլն:
- Ապահովել հայեցողական լիազորությունն իրացնելիս վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքների պահպանումը, այդ թվում՝ վարչական իրավախախտման համար վարչական տույժ ընտրելիս:
- Ապահովել ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 154.1-րդ *(Կառուցապատումը համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում չավարտելը)* հոդվածով նախատեսված իրավախախտման վերաբերյալ գործերով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված՝ շինարարության թույլտվություն տվող մարմնի՝ կառուցապատողին նախազգուշացնելու պարտականության պատշաճ կատարումը:
- Հաշվի առնել տրանսպորտային միջոցների համար գույքահարկի գանձման գործընթացում «Տրանսպորտային միջոցները խոտանված համարելու և տրանսպորտային միջոցների սեփականության իրավունքի պետական գրանցման և պետական հաշվառման (վերահաշվառման) համակարգչային շտեմարանից հանելու մասին» 25 հունիսի 2015 թվականի N 708-Ա Կառավարության որոշման դրույթները, այդ թվում այն, որ տրանսպորտային միջոցը համարվում է 2010 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ խոտանված և հանվում է տրանսպորտային միջոցների սեփականության իրավունքի պետական գրանցման և պետական հաշվառման (վերահաշվառման) համակարգչային շտեմարանի գործող հատվածից այն փաստի ուժով, որ նշված տրանսպորտային միջոցի համար երբևէ չի կնքվել ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանագիր, այդ տրանսպորտային միջոցով կատարված՝ ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 129.2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտումից բացի որևէ այլ իրավախախտման դեպք 2011 թվականի հունվարի 1-ից հետո չի արձանագրվել:
- Ապահովել գույքահարկի գանձման գործընթացներում վարչական վարույթի նախաձեռնումը հնարավորինս վաղ՝ ապահովելով արդարացի լուծում:
- Բացառել վարչական իրավախախտումների վերաբերյալ նշանակված տույժերի մասին որոշումների վիճարկման գործերով իր դեմ հայցադիմումը ներկայացնելու դեպքում սեփական նախաձեռնությամբ վարչական ակտն անվավեր ճանաչելու և դատարանից հայցը մերժել հայցելու պրակտիկան: Վերացման ենթակա որոշումները վերացնել ժամանակին՝ անհարկի չձանրաբեռնելով քաղաքացիներին և դատարանին:

ՀԱՎԵԼՎԱԾ 1.